

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի
հունիսի 15-ի թիվ 32 որոշմամբ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՄ ՏԿ 025/2012

ԿԱՀՈՒՅՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բովանդակություն

Հոդված 1. Նախաբան.....	3
Հոդված 2. Կիրառության ոլորտը.....	3
Հոդված 3. Սահմանումները	6
Հոդված 4. Շուկայում շրջանառության կանոնները	10
Հոդված 5. Անվտանգությանը ներկայացվող պահանջները	12
Հոդված 6. Համապատասխանության գնահատումը (հավաստումը)	21
Հոդված 7. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը.....	34
Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը.....	36
Հավելված 1 «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի	37
Հավելված 2 «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի	40
Հավելված 3 «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի	69
Հավելված 4 «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի	71
Հավելված 5 «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի	74

Հոդված 1. ՆԱԽԱԲԱՆ

1. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում կահույքագործական արտադրանքին ներկայացվող՝ կիրառման եւ կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող կահույքագործական արտադրանքի ազատ տեղափոխումն ապահովելու նպատակով:

3. Եթե կահույքագործական արտադրանքի առանձին տեսակների վերաբերյալ ընդունվել են Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով կահույքագործական արտադրանքի վերաբերյալ պահանջներ են սահմանվում, ապա կահույքագործական արտադրանքը պետք է համապատասխանի Մաքսային միության այդ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնք կիրառվում են դրա նկատմամբ:

4. Կողմերն ապահովում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան կահույքագործական արտադրանքի շրջանառությունն իրենց պետության տարածքում՝ առանց այդպիսի արտադրանքի նկատմամբ լրացուցիչ պահանջներ ներկայացնելու եւ համապատասխանության գնահատման (հավաստման) լրացուցիչ ընթացակարգեր կիրառելու:

Հոդված 2. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը կահույքագործական արտադրանքի

եւ դրա օգտագործման (շահագործման) նկատմամբ պահանջներ է սահմանում՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում մարդու կյանքի եւ (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի եւ կենդանիների ու բույսերի կյանքի եւ (կամ) առողջության պաշտպանությունը, ինչպես նաեւ սպառողներին մոլորեցնող գործողությունների կանխարգելումն ապահովելու նպատակով:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը կիրառվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող կահույքագործական արտադրանքի՝ կենցաղային եւ հասարակական տարածքների համար նախատեսված, այդ թվում՝ անհատական պատվերներով պատրաստված կահույքի արտադրատեսակների, հավաքակազմերի, լրակազմերի նկատմամբ:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում ներկայացված է կահույքագործական այն արտադրանքի ցանկը, որի նկատմամբ սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ.

կահույք՝ բժշկական, այդ թվում՝ հատուկ, ինչպես օրինակ՝ վիրահատական սեղաններ, սեղաններ՝ զննության համար, հիվանդանոցային մահճակալներ՝ մեխանիկական հարմարանքներով, ստոմատոլոգիական բազկաթոռներ, եւ այլ վիրաբուժական, ստոմատոլոգիական, անասնաբուժական,

կահույք՝ նախատեսված օդային, վերգետնյա եւ ստորգետնյա տրանսպորտում օգտագործման համար,

հնաոճ կահույք,

կահույք՝ օգտագործված եւ վերանորոգված,

ցուցադրություններում ցուցադրման եւ գովազդների համար նախատեսված կահույքի նմուշներ:

5. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտին

կահույքագործական արտադրանքի համապատասխանությունը հաստատելու համար իրականացվում է դրա նույնականացումը:

5.1. Կահույքագործական արտադրանքի նույնականացումն իրականացնում են՝

սերտիֆիկացման մարմինները՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության հավաստման դեպքում,

պատրաստողը (վաճառողը կամ պատրաստողի կողմից լիազորված անձը)՝ համապատասխանության հայտարարագրման դեպքում եւ կահույքագործական արտադրանքի, այդ թվում՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում, շուկայահանման դեպքում,

Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինները՝ բացառապես շուկայում կահույքագործական արտադրանքի շրջանառության փուլում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացման դեպքում,

ցանկացած շահագրգիռ անձ:

5.2. Կահույքագործական արտադրանքի նույնականացման համար կիրառվում է հետեւյալ մեթոդներից մեկը կամ դրանց համակցությունը՝

ըստ փաստաթղթերի,

դիտողական,

զգայորոշման,

գործիքային:

5.3. Կահույքագործական այն արտադրանքի նույնականացումը, որի վրա տարածվում է սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը, իրականացվում է կահույքի արտադրատեսակի՝ պատրաստողի կողմից

մականշվածքի (պիտակի, մանեկապիտակի) վրա նշված անվանումն ու նշանակությունը համապատասխանության սերտիֆիկատում կամ համապատասխանության վերաբերյալ հայտարարագրում եւ, անհրաժեշտության դեպքում, կահույքի արտադրատեսակի, հավաքակազմի, լրակազմի տեխնիկական նկարագրում նշված անվանման ու նշագրի հետ համեմատելու միջոցով: Որպես նկարագրեր կարող են օգտագործվել՝

Ֆունկցիոնալ չափսերի մասով միջպետական ստանդարտները, եզրույթներն ու սահմանումները,

կոնստրուկտորական եւ շահագործման փաստաթղթերը,

մատակարարման վերաբերյալ պայմանագրերը (գործարքները, համաձայնագրերը),

պատրաստողի կողմից մշակված տեխնիկական նկարագրերը,

կատալոգները, բուկլետները եւ ազդագրերը:

Հոդված 3. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները.

շրջանառության մեջ դնելը՝ պատրաստողի, վաճառողի կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձի պահեստից ուղարկվող կամ առանց պահեստավորման բեռնառաքվող կամ Մաքսային միության անդամ պետությունների տարածքում իրացման համար արտահանվող արտադրանքի շուկայահանում Մաքսային միության անդամ պետությունների շուկա,

կահույքի լրակազմ՝ կահույքի այնպիսի արտադրատեսակների խումբ, որոնք նախատեսված են տարածքի որոշակի ֆունկցիոնալ գոտու սարքավորման (կահավորման) համար, ունեն միանման գեղարվեստական-ոճական եւ կոնստրուկտորական հատկանիշներ,

միատեսակ կահույքագործական արտադրանքի խումբ՝ կահույքի առանձին արտադրատեսակներ, որոնք ունեն ընդհանուր ֆունկցիոնալ նշանակություն, ինչպես նաև կահույքի հավաքակազմեր կամ լրակազմեր,

երկարակեցություն՝ կահույքի արտադրատեսակների՝ շահագործման տեսական բեռնվածքների ազդեցության տակ կոշտությունը, ամրությունը եւ աշխատունակությունը պահպանելու հատկություն,

կոշտություն՝ կոնստրուկցիայի՝ արտաքին բեռնվածքի ազդեցության տակ անդառնալի ձեւախախտումների առաջացմանը դիմակայելու կարողություն,

պաշտպանիչ-դեկորատիվ պատվածք՝ կահույքի արտադրատեսակի մակերեսային պատվածք, որը միաժամանակ եւ՝ պաշտպանիչ, եւ՝ դեկորատիվ ֆունկցիա է իրականացնում:

պաշտպանիչ պատվածք՝ պատվածք, որով ծածկվում են կահույքի դետալները՝ մակերեսային խոնավության եւ այլ ազդեցիվ նյութերի ազդեցությունից պաշտպանելու, ինչպես նաև կահույքի արտադրատեսակի նյութի՝ բնակելի շինությունների օդային զանգված վնասակար ցնդող նյութերի արտազատումը կանխելու նպատակով,

կահույքի արտադրատեսակ՝ կահույքագործական արտադրանքի միավոր՝ նախատեսված ինքնուրույն օգտագործման համար,

մականշվածք՝ տեղեկատվություն, որը պատրաստողի կողմից անուղղակիորեն զետեղվում է կահույքի որոշակի արտադրատեսակի, փաթեթվածքի, պիտակների (մանեկապիտակների) վրա,

կահույքագործական արտադրանք (կահույք)՝ բնակելի եւ հասարակական տարածքները, ինչպես նաև մարդու կեցության այլ գոտիներ սարքավորելու ստացիոնար կամ տեղափոխելի արտադրատեսակների ամբողջություն,

կահույք կենցաղային՝ կահույք՝ քաղաքային, քաղաքամերձ կամ գյուղական բնակավայրերում զանազան տարածքները սարքավորելու (կահավորելու) համար,

այդ թվում՝ բացօթյա,

կահույք մանկական՝ կահույք, երեխաների համար նախատեսված, որի չափսերը, ձեւը եւ կոնստրուկցիան համապատասխանում են մարդու զարգացող օրգանիզմի տարիքային առանձնահատկություններին եւ հասակի բնութագրին,

կահույք՝ հասարակական տարածքների համար՝ կահույք՝ ձեռնարկությունները եւ հիմնարկները սարքավորելու (կահավորելու) համար՝ հաշվի առնելով դրանց գործունեության բնույթը եւ ֆունկցիոնալ գործընթացների յուրահատկությունները,

կահույք՝ ուսումնական հաստատությունների համար՝ կահույք՝ հանրակրթական դպրոցները, ուսումնարանները, միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները սարքավորելու (կահավորելու) համար,

մեխանիկական անվտանգություն՝ կահույքի արտադրատեսակի մեխանիկական, երկրաչափական հատկությունների եւ բնութագրերի քանակական ցուցանիշների համալիր, որով ապահովվում է օգտագործողի առողջությանը վնաս հասցնելու կամ կյանքին սպառնալիք ներկայացնելու ռիսկի նվազեցումը,

կահույքի հավաքակազմ՝ զանազան ֆունկցիոնալ նշանակության՝ ճարտարապետական-գեղարվեստական (ոճական) ընդհանուր լուծման կիրառմամբ պատրաստված եւ միմյանց հետ չափսերով, կոնստրուկցիայով, երեսապատվածքով եւ երեսամշակմամբ համաձայնեցված կահույքի արտադրատեսակների խումբ,

հրդեհային անվտանգություն՝ կահույքի փափուկ տարրերի պատրաստման համար օգտագործվող մանածագործական [տեքստիլ] եւ կաշվե նյութերի մակերեսային վրա բոցի տարածման, բոցավառելիության վերաբերյալ սահմանված նորմերի պահպանում,

պատվածք՝ այն բոլոր նյութերի շերտերը, որոնցով ծածկվում է

կոնստրուկցիոն նյութերի մակերեսային՝ ներառյալ նախաներկերը, լաքերը, ներկանյութերը, արծնները, պոլիմերները, փայտանյութի միաշերտ նրբատախտակը, թղթաշերտավոր պլաստիկը, թաղանթները, գործվածքները, մետաղները, հանքային հիմքով նյութերը եւ նման այլ նյութեր՝ անկախ նրանից, թե ինչ ձեւով են դրանք ծածկվում,

ամրություն՝ նյութերի, կոնստրուկցիաների՝ արտաքին բեռնվածքին առանց քայքայվելու եւ անդառնալի ձեւախախտումներ ստանալու դիմադրության հատկություն,

Ֆունկցիոնալ չափսեր՝ կահույքի արտադրատեսակների եւ դրանց տարրերի չափսեր, որոնք պայմանավորված են դրանց շահագործման նշանակությամբ եւ պայմաններով: Ֆունկցիոնալ չափսերը հիմնված են մարդաչափական տվյալների, էրգոնոմիկայի, պահպանության օբյեկտների եզրաչափքի վրա եւ ապահովում են կահույքի արտադրատեսակի օգտագործման հարմարավետությունն ու անվտանգությունը,

շահագործման ժամկետ՝ կահույքի արտադրատեսակի՝ արտադրողի կողմից նախատեսված շահագործման օրացուցային տեւողություն՝ սկզբից մինչեւ այն սահմանային վիճակը վրա հասնելը, որի դեպքում դրա դետալները, հանգույցները, միացումները եւ այլն կարող են սկսել վտանգ ներկայացնել քաղաքացիների կյանքի եւ առողջության համար, վնաս հասցնել նրանց գույքին կամ շրջակա միջավայրին,

ստատիկական ամրություն՝ կոնստրուկցիայի՝ առավելագույն մեծությամբ շահագործման բեռնվածքին առանց քայքայման դիմադրելու հատկություն,

ձեւափոխելի կահույք՝ կահույք, որի կոնստրուկցիան հնարավորություն է տալիս փոխելու իր ֆունկցիոնալ նշանակությունը եւ (կամ) չափսերը,

արտադրանքի տիպային նմուշներ՝ կառուցվածքային միանման հորինվածքով արտադրանքի նմուշներ, որոնք ներառում են միանման մասեր, հանգույցներ ու նյութեր, էական նշանակություն ունեն էական պահանջների

կատարման համար եւ համապատասխանում են սահմանված միեւնոյն պահանջներին,

հարվածական ամրություն (հարվածի նկատմամբ ամրություն)՝ հարվածական բեռնվածքի կիրառման նկատմամբ կոնստրուկցիայի ամրություն,

ունիվերսալ-հավաքովի կահույք՝ միասնականացված այնպիսի տարրերի հիման վրա պատրաստված կահույք, որոնք ապահովում են դրա՝ արտադրատեսակների բազմաձեւ հավաքումը,

կայունություն՝ կահույքի արտադրատեսակի՝ այնպիսի ճիգերին դիմադրելու ունակություն, որոնք ձգտում են այն դուրս բերել ելակետային դրությունից, շրջել,

քիմիական անվտանգություն՝ կահույքի արտադրատեսակի այնպիսի վիճակ, որի դեպքում բացակայում է շինությունների օդում վնասակար քիմիական նյութերի պարունակության մակարդակի բարձրացման հետեւանքով սպառողի կյանքին եւ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված անթույլատրելի ռիսկը,

էլեկտրական անվտանգություն՝ կենցաղային էլեկտրակայանքների մոնտաժման ու կիրառման բոլոր նորմերին եւ կանոններին կահույքի այնպիսի արտադրատեսակի համապատասխանությունը, որի կոնստրուկցիայով նախատեսվում է էլեկտրականություն օգտագործող սարքվածքների առկայություն:

Հոդված 4. ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Կահույքագործական արտադրանքը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվում է, եթե այն անցել է սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության՝ դրա նկատմամբ կիրառելի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) անհրաժեշտ

ընթացակարգերը:

2. Պատրաստողը, վաճառողը, ներկրողը կամ պատրաստողի կողմից լիազորված՝ կահույքը շուկայահանող անձը պարտավոր է՝

ապահովել կահույքագործական արտադրանքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին,

պատրաստողի կողմից սահմանված շահագործման ժամկետի ամբողջ ընթացքում ապահովել կահույքի արտադրատեսակի անվտանգությունը,

ուղեկցող փաստաթղթերում եւ արտադրանքի մակնշման դեպքում նշել համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի մասին տեղեկություններ: Ուղեկցող փաստաթղթերում ներառվում են ապրանքային-տրանսպորտային բեռնագիրը, շահագործման հրահանգը եւ հավաքման վերաբերյալ հրահանգը, եթե կահույքը մատակարարվում է քանդած վիճակում,

շահագրգիռ անձանց (իրենց պահանջներով), այդ թվում՝ ապրանքը մաքսային ռեժիմով ձեւակերպելու դեպքում, ներկայացնել փաստաթղթեր, որոնք վկայում են կահույքագործական արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման մասին (համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրը կամ համապատասխանության սերտիֆիկատը կամ դրանց պատճենները),

համապատասխանության սերտիֆիկացման (գնահատման, հավաստման) մարմնին հայտնել արտադրատեսակի կոնստրուկցիայում եւ սերտիֆիկացված կահույքագործական արտադրանքի տեխնիկական փաստաթղթերում կատարվող փոփոխությունների մասին,

կասեցնել կամ դադարեցնել արտադրանքի իրացումը, եթե համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի գործողության ժամկետը լրացել է՝ բացառությամբ այն արտադրանքի, որը Մաքսային միության միասնական տարածքում

շրջանառության մեջ դրվել է համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամանակ, պատրաստողի կողմից սահմանված՝ արտադրանքի շահագործման ժամկետում,

կասեցնել կամ դադարեցնել կահույքագործական արտադրանքի իրացումը, եթե համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի գործողությունը կասեցվել կամ դադարեցվել է,

սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) մարմինների որոշումների հիման վրա կասեցնել այն կահույքագործական արտադրանքի արտադրությունը եւ իրացումը, որն անցել է համապատասխանության գնահատման (հավաստման) ընթացակարգը, սակայն չի համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

3. Կահույքագործական արտադրանքը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշվում է, եթե այն համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության՝ դրա նկատմամբ կիրառելի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

Հոդված 5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կահույքագործական արտադրանքը պետք է պատրաստված լինի այնպես, որ իր նշանակությամբ օգտագործվելու եւ շահագործման փաստաթղթերով նախատեսված կանոնների պահպանման դեպքում այն ապահովի հետեւյալը՝

մեխանիկական անվտանգություն,

քիմիական եւ սանիտարահիգիենիկ անվտանգություն,

հրդեհային անվտանգություն,

էլեկտրական անվտանգություն:

2. Կահույքագործական արտադրանքի մեխանիկական անվտանգությունը պետք է ապահովվի՝

կայունության, ստատիկական ու հարվածական ամրության, կոշտության, ձեւախախտելիության [դեֆորմելիության], ճկվածքների մեծության, կահույքի արտադրատեսակների կոնստրուկցիայի երկարակեցության, կահույքի արտադրատեսակների ֆունկցիոնալ տարրերի տարաշարժման (դուրսքաշման, ձեւափոխման) ճիգերի մակարդակով, փափուկ տարրերի փափկությամբ եւ մնացորդային ձեւախախտմամբ, երկհարկ մահճակալների հորինվածքով: Նավի կահույքի կայունությունը պետք է ապահովվի դրա ամրակայման [ֆիքսացիայի] համար նախատեսված սարքվածքների առկայությամբ: Կահույքագործական արտադրանքի մեխանիկական անվտանգությանը ներկայացվող պահանջները ներկայացված են սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում,

կահույքի արտադրատեսակները, այդ թվում՝ ձեւափոխելի, առանձին դետալները, երեսակողմի եւ ամրակման օժանդակ նյութերը [ֆուրնիտուր], կահույքի արտադրատեսակների ձեւափոխման մեխանիզմները, դուրս քաշվող եւ տարաշարժվող տարրերը շահագործելիս վնասվածքներից պաշտպանության անհրաժեշտ մակարդակով (տարրերի հուսալի ամրակայում [ֆիքսացիա] եւ ամրակում, ինքնաբերաբար բացվելուց պաշտպանություն, սուր ցցուն մասերի ու ծլեպների բացակայություն, սեղանների երեսների, աթոռների նստատեղերի եւ թիկնակների, մահճակալների թիկնակների հասանելի անկյունների կողերի եւ եզրերի բթացում ու կորացում),

ապակուց կահույքի շահագործման կամ ապակու եւ մետաղի, փայտանյութի ու պոլիմերային նյութերի համակցության դեպքում պաշտպանության անհրաժեշտ մակարդակով (քայքայման դեպքում ապակու խոշոր բեկորների առաջացման հնարավորության բացակայությամբ, ապակու հատուկ՝ մխված,

շիկափափկացրած, ամրանավորված եւ բազմաշերտ տեսակների օգտագործում, ապակուց արտադրատեսակների եզրերի մշակում՝ հղկմամբ, ողորկմամբ՝ երեսակը կամ եզրակը հանելով): Թույլատրվում է թերթապակուց դռների նիստերի եւ լողաթների [միջատախտակների] պատրաստումը,

մանկական եւ բազմահարկ մահճակալներից ու մանկական բարձր աթոռներից երեխաների ընկնելու, դրանք շահագործելիս մարմնի մասերը ճմլելու վտանգի առաջացման անթույլատրելի ռիսկի բացակայությամբ,

կահույքի արտադրատեսակների ֆունկցիոնալ չափսերին ներկայացվող պահանջները եւ էրգոնոմիկային ու մարդաչափությանը ներկայացվող պահանջները չպահպանելուց երեխաների եւ դեռահասների առողջության պաշտպանության անհրաժեշտ մակարդակով:

3. Կահույքագործական արտադրանքի քիմիական եւ սանիտարահիգիենիկ անվտանգությունը պետք է ապահովվի կահույքի արտադրատեսակներից շրջակա միջավայր այնպիսի քանակությամբ ցնդող քիմիական նյութերի արտազատման բացակայությամբ, որն ուղղակի կամ անուղղակի անբարենպաստ ազդեցություն կարող է գործել մարդու օրգանիզմի վրա՝ հաշվի առնելով արտազատվող բոլոր նյութերի համատեղ ազդեցությունը: Կահույքը շահագործելիս չպետք է արտազատվեն այնպիսի քիմիական նյութեր, որոնք դասվում են վտանգավորության առաջին կարգին, իսկ մյուս նյութերի պարունակությունը չպետք է գերազանցի օդային միջավայրում տարաշարժի թույլատրելի մակարդակները, որոնք ներկայացված են սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածում: Կահույքից ազդեցության գումարման հատկություն ունեցող մի քանի վնասակար քիմիական նյութերի արտազատման դեպքում դրանց թույլատրելի սահմանային պարունակության նկատմամբ պարունակության հարաբերությունների գումարը չպետք է գերազանցի մեկը:

Մանկական, նախադպրոցական, դպրոցական, բուժկանխարգելիչ, առողջարանային-կուրորտային հիմնարկներում օգտագործվող կահույքը պետք է

ապահովի աշխատանքային եւ ճակատային մակերեսային խոնավ ախտահանում իրականացնելու հնարավորություն՝ միկրոֆլորայի (հատկապես՝ ախտածին) աճից եւ զարգացումից խուսափելու նպատակով: Քիմիական ազդանյութերով ախտահանումից հետո մակերեսային (բարձրակայուն մակերեսային) տեսանելի փոփոխություններ չպետք է լինեն կամ հնարավոր է մակերեսային (կայուն մակերեսային) փայլի կամ գույնի հազիվ նկատելի փոփոխությունների առաջացում:

Կահույքագործական արտադրանքը տարածքում 2 բալից ավելի յուրահատուկ հոտ չպետք է առաջացնի:

Նստելու եւ պառկելու համար նախատեսված կահույքի մակերեսային էլեկտրաստատիկական դաշտի լարվածության մակարդակը շահագործման պայմաններում (շինության օդի (30-60) % խոնավության դեպքում) չպետք է գերազանցի 15.0 կՎ/մ-ը:

Կահույքի պատրաստման համար օգտագործվող բնափայտում եւ բնափայտ պարունակող նյութերում ցեզիում-137-ի թույլատրելի տեսակարար ակտիվությունը չպետք է գերազանցի 300 Բկ/կգ-ը:

Կահույքի պատրաստման համար օգտագործվող հանքային հիմքով նյութերում բնական ռադիոնուկլիդների արդյունավետ տեսակարար ակտիվությունը չպետք է գերազանցի 370 Բկ/կգ-ը:

Կահույքագործական արտադրանքի արտադրության մեջ պետք է օգտագործվեն դրա պատրաստման համար նախատեսված նյութեր եւ լրակազմող [կոմպլեկտավորող] մասեր:

Փայտանյութից սալային նյութերից կահույքագործական դետալների մակերեսայինները (սղոցամակերեսայինները եւ եզրերը) պետք է ունենան պաշտպանիչ կամ պաշտպանիչ-դեկորատիվ պատվածքներ՝ բացառությամբ՝

անտեսանելի մակերեսայինների՝ կցորդելի միացումներում,

բացվածքների՝ օժանդակ նյութերի [ֆուրնիտուր] տեղակայման մասերում,

այն վահանների եզրերի, որոնք բաց են մնում հետեւի «դնովի» կամ «քառորդով» կողապատի տեղակայման դեպքում:

4. Էլեկտրալուսավորման սարքերով, կենցաղային տեխնիկայով, էլեկտրատեխնիկական սարքավորանքով եւ էլեկտրաշարժաբերներով ներկառուցված կահույքի արտադրատեսակների լրակազմման դեպքում էլեկտրական անվտանգության եւ մեկուսիչ պաշտպանության անհրաժեշտ մակարդակը պետք է համապատասխանի «Ցածրավոլտ սարքավորանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

5. Նստելու եւ պառկելու համար նախատեսված կահույքի արտադրատեսակների փափուկ տարրերը պատրաստելիս պաստառապատման նպատակով կիրառվող մանածագործական [տեքստիլ] եւ կաշվե նյութերի հրդեհային անվտանգության անհրաժեշտ մակարդակը.

5.1. Նստելու եւ պառկելու համար նախատեսված կահույքի փափուկ տարրերի պատրաստման համար չպետք է կիրառվեն դյուրաբոցավառ եւ ըստ թունավորության այրման արգասիքների T4 խմբին դասվող պաստառապատման մանածագործական [տեքստիլ] եւ կաշվե նյութերը,

5.2. Կահույքի պատրաստման համար նախատեսված մանածագործական [տեքստիլ] եւ կաշվե նյութերն ուղեկցող փաստաթղթերում պետք է նշվի դրանց հրդեհային անվտանգության մասին տեղեկատվություն:

6. Շահագործման դեպքում կահույքագործական արտադրանքի անվտանգությանը ներկայացվող պահանջները՝

6.1. Շրջանառության մեջ դրված կահույքագործական արտադրանքի օգտագործումը պետք է իրականացվի ըստ կահույքի արտադրատեսակի նշանակության, որը նշվում է մականշվաձքում, հավաքման, շահագործման եւ խնամքի մասին հրահանգում, ինչպես նաեւ (անհրաժեշտության դեպքում) հաշվի

առնելով պատրաստողի կողմից նշված թույլատրելի սահմանային բեռնվածքները.

6.2. Քանդած վիճակում մատակարարվող կահույքագործական արտադրանքը պետք է հավաքվի՝ համաձայն պատրաստողի կողմից կից ներկայացված հավաքման մասին հրահանգի, որը ներառում է համալրման ցուցակ եւ մոնտաժման սխեմա.

6.3. Կահույքագործական արտադրանքի շահագործման դեպքում անհրաժեշտ է բացառել կահույքի արտադրատեսակների՝ հատակին հպվող տարրերում ջրի եւ այլ հեղուկների թափանցումը: Խոհանոցների, լոգասենյակների համար նախատեսված կահույքի, լաբորատորիայի կահույքի արտադրատեսակներում կոնքերի, վրացարանակոնքերի մոնտաժման դեպքում պետք է նախատեսվի դրանց ջրամեկուսացումը կահույքի արտադրատեսակի իրանի մակերեսույթի հետ հպման մասերում.

6.4. Կահույքի արտադրատեսակները տաքացուցիչ եւ ջեռուցիչ սարքերից անմիջական հեռավորության վրա տեղակայելիս շահագործման ժամանակ դրանց մակերեսույթները պետք է պաշտպանված լինեն տաքացումից: Կահույքի տարրերի տաքացման ջերմաստիճանը չպետք է գերազանցի $+40^{\circ}\text{C}$ -ը:

7. Սպառողի համար տեղեկատվությունը ներկայացվում է մականշվածքի, շահագործման վերաբերյալ հրահանգի եւ հավաքման վերաբերյալ հրահանգի տեսքով, եթե կահույքը մատակարարվում է քանդած վիճակում.

7.1. Մաքսային միության անդամ պետության տարածքում իրացվող կահույքի յուրաքանչյուր արտադրատեսակ պետք է ունենա մականշվածք՝ ռուսերենով, եւ, նրա օրենսդրության մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում, իր պետական լեզվով: Մաքսային միության միասնական տարածքում չտեղակայված երկրներից մատակարարվող արտադրանքի առևտրային անվանումը, ինչպես նաեւ պատրաստողի ֆիրմայի անվանումը կարող են կատարվել լատինական այբուբենի տառերով:

Մականշվածքը պետք է կատարվի տպագիր եղանակով՝ հավաքված վիճակում մատակարարվող կահույքի արտադրատեսակին ամուր ամրացվող թղթե մանեկապիտակի (պիտակի) կամ գործվածքից մանեկապիտակի վրա:

Քանդած վիճակում մատակարարվող կահույքի արտադրատեսակները կարող են ունենալ մականշվածքներ՝ արտադրատեսակի նշագրով եւ պատրաստման ամսաթվով: Այդ դեպքում պատրաստողի կամ վաճառողի կողմից արտադրատեսակի նշագիրը դրվում է կահույքի արտադրատեսակի վաճառքի ժամանակ կամ օգտագործողի մոտ դրա հավաքման ժամանակ: Թողարկման ամսաթիվը պետք է նշվի փաթեթվածքի (փաթեթվածքների) վրա: Քանդած վիճակում կահույքի մականշվածքը գետեղվում է փաթեթվածքի վրա:

Թույլատրվում է մականշվածքը գետեղել չլվացվող ներկով, դրոշմակմամբ, խարանկարմամբ, ճզմանցմամբ, ինչպես նաեւ մանեկապիտակի առանձին տվյալները նշել հատուկ դրոշմով:

7.2. Մականշվածքը պետք է հստակ լինի եւ ներառի՝

կահույքի արտադրատեսակի անվանումը՝ ըստ շահագործման եւ ֆունկցիոնալ նշանակության, արտադրատեսակի նշագիրը (թվային, իսկական, մոդելը եւ այլն),

պատրաստողի (առկայության դեպքում) ապրանքային նշանը (լոգոտիպը),

պատրաստողի երկրի անվանումը,

պատրաստողի անվանումը եւ գտնվելու վայրը,

պատրաստողի կողմից լիազորված անձի, ներկրողի անվանումը, իրավաբանական եւ գործունեության հասցեն,

պատրաստման ամսաթիվը,

երաշխիքային ժամկետը,

պատրաստողի կողմից սահմանված շահագործման ժամկետը,

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը:

Քանդած վիճակում մատակարարվող կահույքի դեպքում մականշման մանեկապիտակը պետք է հավաքման վերաբերյալ հրահանգի հետ տեղադրվի փաթեթվածքի մեջ.

7.3. Հասարակական տարածքների համար նախատեսված մանկական եւ աշակերտական աթոռների, սեղանների, նստարանների մականշվածքում լրացուցիչ պետք է նշվեն՝ համարիչում՝ հասակին համապատասխանող թիվը, հայտարարում՝ երեխաների միջին հասակը:

Նախադպրոցական հիմնարկների եւ ուսումնական հաստատությունների (բացառությամբ միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների) համար նախատեսված սեղանների, աշակերտական նստարանների եւ աթոռների տեսանելի արտաքին մակերեսային վրա պետք է զետեղվի գունավոր մականշվածք՝ 10 մմ-ից ոչ պակաս տրամագծով շրջանակի կամ 10x15 մմ-ից ոչ պակաս չափսերով հորիզոնական ժապավենի տեսքով, հետեյալ գույների՝ կախված կահույքի արտադրատեսակի՝ հասակին համապատասխանող թվերից.

00՝ սեւ,

0՝ սպիտակ,

1՝ նարնջագույն,

2՝ մանուշակագույն,

3՝ դեղին,

4՝ կարմիր,

5՝ կանաչ,

6՝ երկնագույն:

Գունավոր մականշվածքի զետեղման եղանակով պետք է ապահովվի դրա երկարատեւ պահպանվածությունը: Թույլատրվում է ինքնակաշուն հիմքով տպագիր եղանակով կատարված գունավոր մականշվածքի զետեղումը:

7.4. Կահույքագործական արտադրանքն ուղեկցվում է հրահանգով, որում սահմանվում են անվտանգ շահագործման կանոններ ու պայմաններ, այդ թվում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 6-րդ կետում նշված տեղեկատվություն եւ այլ լրացուցիչ տեղեկություններ:

8. Անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանության ապահովումը.

8.1. Սույն Տեխնիկական կանոնակարգին կահույքագործական արտադրանքի համապատասխանությունն ապահովվում է դրա անվտանգությանը ներկայացվող պահանջների անմիջական կատարմամբ կամ «Կիրառման արդյունքում ինքնակամ հիմունքներով «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումն ապահովող՝ ստանդարտացման ոլորտի փաստաթղթերի ցանկ»-ում ներառված փաստաթղթերի պահանջների կատարմամբ,

8.2. Կահույքագործական արտադրանքի չափումների փորձարկումների (հետազոտությունների) մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները, որոնք անհրաժեշտ են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար, սահմանվում են «Փորձարկումների (հետազոտությունների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու եւ կահույքագործական արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար անհրաժեշտ՝ նմուշառման կանոններ

ներառող ստանդարտների ցանկ»-ում ընդգրկված ստանդարտներում:

Հոդված 6. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀԱՎԱՍՏՈՒՄԸ)

1. Կահույքագործական արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության՝ դրա նկատմամբ կիրառելի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատումը (հավաստումը) կատարվում է համապատասխանության հավաստման (համապատասխանության սերտիֆիկացման կամ հայտարարագրման) ձեռով եւ պետական հսկողության (վերահսկողության) ձեռով:

2. Կենցաղային կահույքը եւ հասարակական տարածքների համար նախատեսված կահույքը, որոնց ցանկը ներառված է սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում, ենթակա են համապատասխանության հայտարարագրման՝ ըստ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածով նախատեսված սխեմաների՝ բացառությամբ մանկական կահույքի, ուսումնական հաստատությունների համար նախատեսված կահույքի, նախադպրոցական հիմնարկների համար նախատեսված կահույքի, որոնք ենթակա են համապատասխանության պարտադիր սերտիֆիկացման՝ ըստ սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածով նախատեսված սխեմաների:

3. Կահույքագործական արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացվում է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 621 որոշմամբ հաստատված՝ համապատասխանության գնահատման (հավաստման) միասնականացված ընթացակարգերի եւ տիպային սխեմաների համաձայն:

4. Համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրը եւ համապատասխանության սերտիֆիկատը Մաքսային միության մաքսային տարածքում գործում են կահույքագործական այն արտադրանքի մասով, որը Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվում է

համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամանակ, եւ կիրառվում են արտադրանքի յուրաքանչյուր միավորի նկատմամբ՝ դրա շահագործման ժամկետի ընթացքում:

5. Համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի մասին տվյալները պետք է նշվեն արտադրանքն ուղեկցող փաստաթղթերում:

6. Կահույքագործական արտադրանքի համապատասխանության հավաստում կատարելու դեպքում հայտատուն ձեռավորում է սույն Տեխնիկական կանոնակարգի՝ անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանությունը հավաստող ապացուցողական փաստաթղթերի լրակազմ, որն ընդգրկում է.

ա) կահույքի արտադրատեսակի կամ միատեսակ կահույքագործական արտադրանքի խմբի տեխնիկական նկարագիրը, որը ներառում է՝

կահույքի արտադրատեսակների (արտադրատեսակների խմբի) անվանումը,
կահույքի արտադրատեսակների նշագիրը եւ ֆունկցիոնալ նշանակությունը,
ընդհանուր ձեւի գծագրերը՝ եզրաչափքային եւ ֆունկցիոնալ չափսերի նշմամբ,

արտադրատեսակի կոնստրուկցիայի համառոտ նկարագիրը,

շահագործման առանձնահատկությունները, սահմանային բեռնվածքները,

բ) համապատասխանության սերտիֆիկատները կամ նյութերի եւ լրակազմող արտադրատեսակների փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում),

գ) սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 8.1 կետում նշված՝ մասամբ կամ ամբողջությամբ օգտագործված միջպետական կամ ազգային ստանդարտների եւ փաստաթղթերի ցանկը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի

պահանջներին արտադրանքի համապատասխանության հավաստումն ապահովելու համար, իսկ եթե նշված ստանդարտները եւ փաստաթղթերը չեն կիրառվել, ապա սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների իրականացման նպատակով ընտրված որոշումների նկարագիրը,

դ) պատրաստողի, վաճառողի, օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձի եւ (կամ) Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից իրականացված՝ կահույքագործական արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների արձանագրությունները,

ե) գործարքը (մատակարարման վերաբերյալ պայմանագիրը)՝ խմբաքանակի, հատերով արտադրատեսակի համար, կամ ապրանքներն ուղեկցող փաստաթղթերը՝ խմբաքանակի, հատերով արտադրատեսակի համար,

զ) սերտիֆիկացման արտասահմանյան մարմիններից ստացված՝ կահույքագործական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատները (առկայության դեպքում),

է) սերտիֆիկատը՝ պատրաստողի՝ որակի կառավարման համակարգի վերաբերյալ, որը կիրառվում է արտադրության կամ նախագծման եւ համապատասխանության հավաստման համար հայտագրված կահույքագործական արտադրանքի արտադրության նկատմամբ, եթե դա նախատեսված է համապատասխանության հավաստման սխեմայով,

ը) այլ փաստաթղթեր, որոնցով ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաստվում է սույն Տեխնիկական կանոնակարգի՝ անվտանգությանը ներկայացվող պահանջներին կահույքագործական արտադրանքի համապատասխանությունը (առկայության դեպքում):

7. Կահույքագործական արտադրանքի սերտիֆիկացումը.

7.1. Կահույքագործական արտադրանքի սերտիֆիկացում անցկացնում է

Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված՝ համապատասխանության սերտիֆիկացման (գնահատման (հավաստման)) մարմինը, որի հավատարմագրման ոլորտում ընդգրկված է կահույքագործական արտադրանք:

Հայտատուն արտադրանքի սերտիֆիկացման վերաբերյալ հայտով իր ընտրությամբ կարող է դիմել հավատարմագրված՝ ցանկացած սերտիֆիկացման մարմին, որի հավատարմագրման ոլորտում ընդգրկված է տվյալ արտադրանքը, եւ որն ընդգրկված է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում,

7.2. Կահույքագործական արտադրանքի սերտիֆիկացման համար կիրառվում են 1ս, 2ս, 3ս սխեմաները, որոնց կազմը ներկայացված է սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածում:

1ս եւ 2ս սխեմաներն օգտագործվում են սերիական թողարկման արտադրանքի սերտիֆիկացման համար:

3ս սխեման օգտագործվում է կահույքագործական արտադրանքի խմբաքանակի սերտիֆիկացման համար:

1ս եւ 2ս սխեմաներով սերտիֆիկացման դեպքում հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր, կամ պատրաստողը կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնողը՝ հայտատուի հետ կնքած պայմանագրի հիման վրա՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանությունն ապահովելու մասով եւ մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության համար պատասխանատվության մասով:

3ս սխեմայով սերտիֆիկացման դեպքում հայտատու կարող է լինել

Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր, կամ պատրաստողը կամ վաճառողը կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնողը՝ հայտատուի հետ կնքած պայմանագրի հիման վրա՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանությունն ապահովելու մասով եւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության համար պատասխանատվության մասով:

7.3. Կահույքագործական արտադրանքի սերտիֆիկացում անցկացնելիս հայտատուն համապատասխանության սերտիֆիկացման (զնահատման, հավաստման) մարմին է ներկայացնում՝

սերտիֆիկացում անցկացնելու վերաբերյալ հայտը,

սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերի լրակազմը:

Հայտը պետք է ներառի՝

հայտատուի անվանումը եւ գտնվելու վայրը,

պատրաստողի անվանումը եւ գտնվելու վայրը,

պայմանագրի կամ գործարքի վավերապայմանները (օտարերկրյա պատրաստողի համար),

կահույքագործական արտադրանքի մասին տեղեկությունները եւ դրա նույնականացնող նշանները (անվանումը, ծածկագիրը՝ ըստ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության դասակարգչի, այն փաստաթուղթը, որի համաձայն պատրաստված է արտադրանքը (միջպետական կամ ազգային ստանդարտ, տեխնիկական պայմաններ եւ այլ փաստաթղթեր), թողարկման ձեւը՝ սերիական արտադրություն կամ խմբաքանակ,

սերտիֆիկացման սխեման:

7.4. Սերտիֆիկացման մարմինը քննում է հայտը, սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն նույնականացնում է արտադրանքը եւ սերտիֆիկացում անցկացնելու հնարավորության վերաբերյալ որոշում է ընդունում:

Դրական որոշման դեպքում սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկացմանն առնչվող աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագիր է կնքում հայտատուի հետ:

Սերտիֆիկացման մարմինն աշխատանքները կատարում է սերտիֆիկացման ընտրված սխեմայի համաձայն, պատրաստում է որոշումը եւ դրական արդյունքի դեպքում հայտատուին տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատը,

7.5. Սերտիֆիկացման բացասական արդյունքի դեպքում սերտիֆիկացման մարմինը հայտատուին ուղարկում է համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը մերժելու վերաբերյալ հիմնավորված որոշում:

7.6. Տիպային նմուշի (տիպային նմուշների) կամ կահույքագործական արտադրանքի հատերով արտադրատեսակի փորձարկումն անցկացվում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստր մուտքագրված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից՝ սերտիֆիկացման մարմնի հանձնարարությամբ: Փորձարկումների արձանագրությունը փոխանցվում է արտադրանքի սերտիֆիկացման մարմնին եւ հայտատուին:

Պատրաստողի (այդ թվում՝ օտարերկրյա), վաճառողի, ներկրողի, օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված անձի մոտ անցկացվող փորձարկումների համար նմուշառումը կատարվում է սերտիֆիկացման մարմնի կամ նրա հանձնարարությամբ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից:

Սերտիֆիկացվող կահույքագործական արտադրանքի փորձարկումների ծավալը, այդ թվում՝ տեսչական հսկողության դեպքում, որոշում է արտադրանքի սերտիֆիկացման մարմինը,

7.7. Արտադրության վիճակի վերլուծությունը սերտիֆիկացման մարմնի կողմից իրականացվում է պատրաստողի մոտ: Վերլուծության արդյունքները ձեւակերպվում են ակտով:

Պատրաստողի մոտ որակի կառավարման սերտիֆիկացված համակարգի առկայության դեպքում սերտիֆիկացման մարմինը գնահատում է տվյալ համակարգի հնարավորությունը՝ ապահովելու սերտիֆիկացվող՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան կահույքագործական արտադրանքի կայուն թողարկումը,

7.8. Սերտիֆիկացման սխեմայով նախատեսված ստուգումների դրական արդյունքների դեպքում սերտիֆիկացման մարմինը ձեւակերպում է համապատասխանության սերտիֆիկատը եւ այն հանձնում է հայտատուին:

Համապատասխանության սերտիֆիկատը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 896 որոշմամբ հաստատված միասնական ձեւով:

Սերտիֆիկացման մարմինը հանձնված համապատասխանության սերտիֆիկատի վերաբերյալ տեղեկությունները փոխանցում է Միասնական ձեւով ձեւակերպված՝ հանձնված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության վերաբերյալ հայտարարագրերի միասնական ռեեստր,

7.9. Համապատասխանության սերտիֆիկատը կարող է ունենալ հավելված, որը ներառում է որոշակի այնպիսի արտադրատեսակների ցանկ, որոնց նկատմամբ այն կիրառելի է:

Հավելվածը ձեւակերպվում է, եթե՝

պահանջվում է մանրամասնել հայտատուի կողմից թողարկվող եւ միեւնույն պահանջներին համապատասխան սերտիֆիկացված միատեսակ կահույքագործական արտադրանքի խմբի կազմը,

պահանջվում է նշել պատրաստող գործարանները, որոնք ներառված են ավելի խոշոր՝ արտադրանքի արտադրության միասնական պայմաններ ունեցող միավորումներում,

7.10. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանվում է՝ կախված հայտատուի կարգավիճակից, արտադրանքի տեսակից եւ նշանակությունից, սերտիֆիկացման ընտրված սխեմայից, կահույքագործական արտադրանքի պլանավորվող թողարկման ժամկետից կամ ներկրող երկրի մատակարարումից, սակայն ոչ ավելի, քան հինգ տարով,

7.11. 1ս եւ 2ս սխեմաների համաձայն սերտիֆիկացված կահույքագործական արտադրանքի նկատմամբ տեսչական հսկողությունը սերտիֆիկացման մարմնի կողմից իրականացվում է հայտատուի մոտ ընտրված նմուշների փորձարկման եւ (կամ) արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից արտադրության վիճակի վերլուծության (1ս սխեմայով սերտիֆիկացման դեպքում) եւ որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից որակի կառավարման համակարգի նկատմամբ հսկողության (2ս սխեմայով սերտիֆիկացման դեպքում) միջոցով,

7.12. Հայտատուն սերտիֆիկացված արտադրանքի արտադրության գործընթացում սերտիֆիկացման մարմնին տեղեկացնում է արտադրանքում կատարվող փոփոխությունների մասին:

Սերտիֆիկացման մարմինը վերլուծում է այդ փոփոխությունները եւ որոշում է կայացնում հանձնված սերտիֆիկատի գործողությունը պահպանելու մասին կամ արտահերթ տեսչական հսկողություն անցկացնելու մասին՝ ավելի վաղ՝ սերտիֆիկացման ժամանակ հավաստված անվտանգության պահանջներին՝ կատարված փոփոխություններով արտադրանքի համապատասխանության

հավաստման նպատակով,

7.13. Տեսչական հսկողության արդյունքներով սերտիֆիկացման մարմինը կայացնում է հետեւյալ որոշումներից որեւէ մեկը՝

սերտիֆիկատի գործողությունը համարել հավաստված,

կասեցնել համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը,

դադարեցնել համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը,

երկարաձգել համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ նոր ժամկետով համապատասխանության սերտիֆիկատ տրամադրել,

7.14. Համապատասխանության սերտիֆիկատը հայտատուի մոտ պահպանվում է այդ արտադրանքն արտադրությունից հանելու (դադարեցնելու) օրվանից հետո՝ 10 տարվա ընթացքում: Համապատասխանության սերտիֆիկատի պատճենը, սերտիֆիկացման արդյունքները հավաստող փաստաթղթերն ու նյութերը դրանք տրամադրած սերտիֆիկացման մարմնում պահպանվում են համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից հետո՝ առնվազն 5 տարի:

7.15. Իրավաբանական անձի լուծարման, վերակազմակերպման կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումն ուժը կորցնելու դեպքում ավելի վաղ շրջանառության մեջ դրված արտադրանքի համար համապատասխանության սերտիֆիկատը վավերական է դրա վաճառքի դեպքում՝ պատրաստողի կողմից սահմանված շահագործման ժամկետի ընթացքում:

8. Կահույքագործական արտադրանքի համապատասխանության հայտարարագրման կարգը.

8.1. Կահույքագործական արտադրանքի համապատասխանության հայտարարագրումը հայտատուի կողմից իրականացվում է սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածում ներկայացված 1h, 2h, 3h, 4h, 6h սխեմաներով

նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

1h եւ 2h սխեմաները հիմնված են հայտատուի սեփական ապացույցների վրա: 1h եւ 2h սխեմաներով համապատասխանության հայտարարագրումը կարող է իրականացվել գրավաճառության համար նախատեսված տարածքների եւ առետրի ձեռնարկությունների կահույքի, հանդիսադահլիճների բազկաթոռների համար:

3h եւ 6h սխեմաները կիրառվում են համապատասխանության հայտարարագրման դեպքում՝ օգտագործելով՝

պատրաստողի, պատրաստողի կողմից լիազորված անձի սեփական ապացույցները, Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված՝ արտադրանքի նմուշների փորձարկումները:

6h սխեմայով նախատեսվում է նաեւ կահույքագործական արտադրանքի նախագծման եւ (կամ) արտադրության որակի կառավարման համակարգի սերտիֆիկացումը Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից:

4h սխեման կիրառվում է համապատասխանության հայտարարագրման դեպքում՝ օգտագործելով՝

պատրաստողի, պատրաստողի կողմից լիազորված անձի, վաճառողի, ներկրողի սեփական ապացույցները, Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված՝ արտադրանքի նմուշների փորձարկումները:

Անհատական պատվերներով (արտադրատեսակների էսքիզները եւ

չափսերը հաշվի առնելով) պատրաստված՝ հատերով արտադրության կահույքագործական արտադրանքի անվտանգությունը հավաստվում է համապատասխանության վերաբերյալ հայտարարագրով, որը պատրաստողի կողմից ընդունվում է կոնստրուկցիայով ու կիրառվող նյութերով նույնանման կահույքագործական արտադրանքի (հավաքակազմեր, սերիաներ, հավաքածուներ, ծրագրեր եւ այլն) համար՝ 3h, 4h, 6h սխեմաներով:

8.2. Հայտատուն, սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածում ներկայացված՝ հայտարարագրման սխեմաների կազմին համապատասխան, ձեւավորում է սույն հոդվածի 6-րդ կետում թվարկված ապացուցողական փաստաթղթերի լրակազմը, հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) կամ փորձարկման սեփական լաբորատորիայում անցկացնում է արտադրանքի տիպային նմուշների փորձարկումներ, ընդունում եւ գրանցում է համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրը:

8.3. 1h եւ 2h սխեմաներով հայտարարագրման դեպքում արտադրանքի փորձարկումներն անցկացվում են փորձարկման սեփական լաբորատորիայում: 3h, 4h, 6h սխեմաներով համապատասխանության հայտարարագրման դեպքում փորձարկումներն անցկացվում են միայն Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում):

1h, 3h եւ 6h սխեմաներով հայտարարագրման դեպքում արտադրական հսկողությունն իրականացնում է պատրաստողը,

8.4. 1h, 3h, 6h սխեմաներով կահույքագործական արտադրանքի համապատասխանության հայտարարագրման դեպքում հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը՝

որպես անհատ ձեռնարկատեր, կամ պատրաստող կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող՝ մատակարարվող արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունն ապահովելու մասով եւ մատակարարվող արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվության մասով հայտատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա (օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձ):

2h, 4h սխեմաներով համապատասխանության հայտարարագրման դեպքում հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր, կամ պատրաստողը կամ վաճառողը կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնողը՝ հայտատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ մատակարարվող արտադրանքի համապատասխանությունն ապահովելու մասով,

8.5. Համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի ընդունման համար հիմք հանդիսացող ապացուցողական նյութերի կազմը.

8.5.1. որպես սեփական ապացույցների հիման վրա համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի ընդունման համար հիմք հանդիսացող ապացուցողական նյութեր օգտագործվում են սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 6-րդ կետում նշված փաստաթղթերը,

8.5.2. որպես նշված փաստաթղթերի կիրառման պայմաններ կարող են դիտարկվել՝

ա) փորձարկումների արձանագրությունների համար՝

փորձարկումների արձանագրություններում այն ցուցանիշների նշանակության առկայությունը, որոնք հավաստում են հայտագրված որոշակի արտադրանքի նկատմամբ կիրառվող՝ սույն Տեխնիկական կանոնակարգում

սահմանված բոլոր պահանջներին համապատասխանությունը,

փորձարկումների արձանագրությունների կիրառումը հայտագրված կահույքագործական արտադրանքի նկատմամբ,

բ) համապատասխանության սերտիֆիկատները կամ նյութերի, լրակազմող արտադրատեսակների փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում),

գ) արտադրության որակի կառավարման համակարգի վերաբերյալ սերտիֆիկատները (6h սխեմայի համար), եթե դրանք կիրառվում են հայտագրված արտադրանքի պատրաստման նկատմամբ,

դ) այլ փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաստում են կահույքագործական արտադրանքի համապատասխանությունը սահմանված պահանջներին, այդ թվում՝ հայտագրված արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատները, որոնք տրամադրվել են ինքնակամ սերտիֆիկացման դեպքում (պայմանով, որ ինքնակամ սերտիֆիկացման ժամանակ հավաստվել են անհրաժեշտ բոլոր պահանջները),

8.6. Համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրը ձեակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 896 որոշմամբ հաստատված միասնական ձեռով:

8.7. Համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրը կարող է ընդունվել կահույքագործական արտադրանքի որոշակի տեսակների կամ միատեսակ արտադրանքի այն խմբի դեպքում, որի առնչությամբ սահմանվել են համապատասխանության հավաստագրման ենթակա՝ անվտանգությանը ներկայացվող միասնական պահանջներ,

8.8. Համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրն ընդունվում է այնպիսի ժամկետով, որը հայտատուի (պատրաստողի, վաճառողի, պատրաստողի կողմից լիազորված անձի, ներկրողի) կողմից սահմանվում է՝ հաշվի առնելով սերիական արտադրանքի թողարկման պլանավորվող ժամկետը,

արտադրանքի խմբաքանակի ծավալը, այն ապացուցողական փաստաթղթերի գործողության ժամկետը, որոնց հիման վրա ընդունվել է հայտարարագիրը, հայտարարագրման ընտրված սխեման, սակայն ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով,

